



## Կապան քաղաքի փողոցային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի գլխավոր նպատակն է քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման ճանապարհով Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաև ցուցադրել նոր լուսադիոդային տեխնոլոգիաների առավելությունները:

Ցուցադրական նախագիծն իրականացվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Կապանի քաղաքապետարանի միջև 2016թ. հուլիսին ստորագրված մտադրությունների մասին հուշագրի շրջանակներում:

### Ցուցադրական փողոց՝ Շահումյան փողոց

Ցուցադրական փողոցի երկարությունը՝ 1.13 կմ

Ֆինանսավորում՝ ՄԱԶԾ-ԳԷՖ՝ 82%, Կապանի քաղաքապետարան՝ 18%

Շահումյան փողոցի ցուցադրական նախագծի լուսավորության համակարգի ցուցանիշները	Նախկինում Բարձր ճնշման նատրիումային	Ներկայում ԼԵԴ լուսատուներ	Օգուտներ
Լուսատուների քանակը	56	56	
Լուսավորվածության միջին մակարդակը, լյուքս	4	17	Համապատասխանություն նորմերին
Գումարային հզորությունը, կՎտ	15.96	3.98	Նվազում՝ 11.98
Տարեկան էներգասպառումը, ՄՎտժ	29.1	7.3	Խնայողությունը՝ 21.87
Տարեկան ջերմոցային գազերի արտանետում, տCO <sub>2</sub>	12.9	3.2	Կրճատում՝ 9.7
Շահագործման և սպասարկման տարեկան ծախսեր, ԱՄՆ դոլար	2 753	685	Խնայողություն՝ 2 067

### Ցուցադրական նախագծի իրականացման հիմնական օգուտները

- ✓ Փողոցային լուսավորության համակարգի էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է մոտ **75%**,
- ✓ Ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են **9.7 տCO<sub>2</sub>**:
- ✓ **էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամի ստեղծում** Կապանի քաղաքապետարանում:

### Այլ առավելություններ

- ✓ Լուսավորվածության մակարդակը և համաչափությունը համապատասխանեցվել են գործող նորմերին, բարձրացնելով անվտանգության մակարդակը,
- ✓ Հիմնվել է էներգախնայողության, լուսավորվածության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մշտադիտարկման թափանցիկ համակարգ,
- ✓ Քաղաքի էներգետիկ գործողությունների պլանի մեջ ներառվել է լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները: